

# ԲԱՐԵԿԱՄ

Ով որ բարի բարեկամ կ'ունենայ, կը գտնէ բոլոր բարիքները, իսկ ով որ չար բարեկամ կ'ունենայ կը կորսնցնէ ամէն բարիք: Նախընտրելի է առանց բարեկամի մնալ, քան թէ չարի հետ ընկերանալ: Բարեկամ պէտք է ձեռք բերել մանաւանդ անոր համար, որ մէկու մը ունեցած բարին ամբողջական մնայ եւ չունեցածն ալ բարեկամի միջոցաւ ձեռք բերուի: Իսկ չար բարեկամը մէկուն ունեցած բարին կը խլէ իրմէ եւ անոր չունեցածն ալ բնաւ չի կրնար տալ, որովհետեւ անոնք, որ չար են չեն կրնար ուրիշին բարիք գործել:

Եթէ կ'ուզես որ մէկը բեզի բարեկամ եւ հաւատարիմ ըլլայ, նախ դո՛ւն անոր անկեղծ բարեկամ եղիր, որպէսզի քու բարութիւնդ ուրիշները բեզի բարեկամ դարձնէ: Որովհետեւ եթէ դուն ուրիշներուն բարին չես կամենար՝ մի՛ յուսար թէ ուրիշները բեզի բարիք կը կամենան:

Իմաստուններուն համար աւելի ուրախալի բան չկայ, քան առաքիւնի բարեկամներու հետ կենցաղապարելն ու կարեւոր ու օգտակար բաներու մասին գրուցելը: Իմաստուններուն աւելի դիւրին է աշխարհի բոլոր վայելքները կորստնցնել, քան թէ առաքիւնի բարեկամներու ընկերութենէն զրկուիլ:

Պատշաճ է երկնաքաղաքացի անլանել անոնց, որոնք բարեպաշտական գործերով, բարեկամութեան սերտ սիրով իրարմէ անբաժան կը մնան: Այս է երկրի վրայ երկնային կեանք վարելը, որովհետեւ երկնայիններուն յատուկ է սիրոյ մէջ հաստատուն մնալ Աստուծո՛մով եւ ընկերոջ հանդէպ:...

Շարունակելի

## ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԴԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԴԻՏԱՆԿԻՒՆԷՆ

### ՈԳԻՆԵՐՈՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆ

Այստեղ չըսուիր, որ ասով զբաղողները վախով ու սարսափով կը համակուին: Այլ գրուած է, թէ՛ ով որ ասով կը զբաղի՝ գարշելի է: Այսինքն ո՛չ միայն զբաղումը, այլ այդ գործը ընող մարդն ալ գարշելի է Աստուծոյ աչքին: Ուր որ կը հաւաքուին ոգեկանչութեան համար, այդ տան պատերուն ու դռներուն պէտք է գրել հետեւեալ խօսքերը. «Այր թէ կին, ո՛վ որ վհուկ կամ հմայող ըլլայ՝ անպայման պէտք է մեռցուի. քարերով պէտք է քարկոծեն զանոնք. անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ» (Ղեւտացւոց 20.27):

Թող լսեն բոլոր անոնք, որոնք կը զբաղին այդ արգիլուած գործով: Լսեցէ՛ք, ով դուք գուշակներ եւ հրմայողներ. «Անպայման պէտք է մեռցուի. քարերով պէտք է քարկոծեն զանոնք»:

Աստուած դեռ աւելի կ'ըսէ: Ան կը սպառնայ ո՛չ միայն կախարդներուն ու գուշակներուն, այլ նաեւ անոնց առնչուած մարդոց: «Վհուկներուն մտիկ մի՛ ընէք, եւ հմայողներուն բան մի՛ հարցնէք, որպէսզի անոնցմով չպղծուիք. Է՛ս եմ Տէրը, ձեր Աստուածը» (Ղեւտ. 19.31):

Ուրեմն, ով որ կը դիմէ գուշակին, երես կը դարձնէ Աստուծո՛մէ եւ մութ ուժերէն օգնութիւն կը հայցէ: Աստուած աւելի խիստ ձեւով կ'ըսէ. «Վհուկներուն ու հմայողներուն դիմող եւ անոնցմով ինծի դէմ անհաւատարմութիւնը ընող ոեւէ անձի դէմ պիտի դառնամ...»

Շարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ

ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԲԵՈՒՄ ԵՌԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴԱՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119.105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 26 ՓԵՏՐՈՒԱՐ, 2012 ԹԻՒ 9

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՆՈՍԻ 5.17-20

### Բ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՅ: ԱՐՏԱՔՍԱՆ

Մի՛ կարծէք թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու. չեկայ ջնջելու, այլ ամբողջացնելու: Հաստատ գիտցէ՛ք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնը կէտ առ կէտ պիտի իրականանան առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկինքն ու երկիրը պիտի անցնին: Ով որ ամենափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ պատուիրէ նոյնը կատարել, երկինքի արքայութեան մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով որ գործադրէ պատուիրանները եւ նոյնը ուսուցանէ, մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ: Կ'ըսեմ ձեզի, երկինքի արքայութենէն ներս կրնաք մտնել այն ատեն միայն, երբ Աստուծոյ պատուիրաններուն նկատմամբ իրենց հաւատարմութիւնը փարիսեցիներուն եւ օրէնքի ուսուցիչներուն ունեցած հաւատարմութենէն աւելի ըլլայ:

Լսեր էք որ անցեալին ըսուած է. «Մի՛ սպաններ, որովհետեւ ան որ կը սպաննէ, պիտի դատապարտուի»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Ով որ առանց պատճառի իր եղբոր դէմ բարկանայ, պիտի դատապարտուի: Ով որ իր եղբայրը յիմար կոչէ, դարձեալ ատեան պիտի բերուի. կամ, ան որ իր եղբայրը անմիտ կոչէ, Գեհէնի կրակին պիտի դատապարտուի: Եթէ գոհի սեղանին վրայ ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ սեղանին առջեւ, զնա՛ նախ հաշտուէ՛ եղբորդ հետ եւ ապա եկու՛ր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ՛:

Երբ մէկը խնդիր ունի քեզի հետ եւ դատի կը կանչէ քեզ, սկիզբէն համաձայնութեան եկուր անոր հետ, երբ տակաւին ժամանակ ունիս. այլապէս քեզ դատաւորին կը յանձնէ, դատաւորն ալ՝ ոստիկանին եւ բանտ կը նետուիս: Վստահ եղի՛ր, թէ բանտէն պիտի չելլես մինչեւ որ տուգանքիդ վերջին դահեկանը չվճարես:

Լսեր էք որ ըսուած է. «Մի՛ շնար»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի, թէ ով որ ցանկութեամբ նայի ոեւէ կնոջ՝ արդէն իսկ իր սիրտին մէջ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր հետ: Եթէ աջ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ՛ եւ նետէ՛ գայն, որովհետեւ նախընտրելի է, որ անդամներէդ մէկը կորսնցնես քան թէ ամբողջ մարմնով դժուր նետուիս: Եթէ աջ ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ՛ ու նետէ՛ գայն, որովհետեւ նախընտրելի է որ անդամներէդ մէկը կորսնցնես, քան թէ ամբողջ մարմնով դժուր նետուիս:

## ԹԵՈՂՈՐՈՍ ԶՕՐԱՎԱՐ

Ամասիոյ Սարու գիւղէն՝ բարեպաշտ ծնողքի զաւակ. կը պատկանէր Մաքսիմիանոսի օրով զինուորներու այն կարգին, որ կը կոչուէր դիոն, այսինքն «նորամուտ»: Ծամբորդած միջոցին օր մը հանդիպեցաւ ահագին վիշապի մը, զոր սպաննեց նիզակով եւ հաւատքով: Յետոյ, երբ յայտնուեցաւ քրիստոնէութիւնը, քննութեան կանչուեցաւ, համարձակ խոստովանեցաւ ստուգութիւնը, եւ բացի այդ, զիշեր ատեն կրակի տուաւ մեծագոյն աստուածուհի Ռէայի մեհեանը: Այս պատճառաւ սաստիկ գանակոծուել վերջ բանտ նետուեցաւ, ուր երկնային տեսիլքի մխիթարութիւնն ունեցաւ: Կրկին հարցաքննութենէ վերջ այրեցին սուրբը 306-ին: Նշխարները ամփոփեց Եւսեբիա անունով տիկին մը իր տան մէջ, որ յետոյ եկեղեցիի վերածուեցաւ:

Հայ Եկեղեցոյ տօնացոյցին համաձայն Թեոդորոս Զօրավարին տօնը կը զուգադիպի Ծաբաթ՝ 25 Փետրուար, 2012-ին:

### ԱՌԱՎ. ԳԼՈՒԽ ԺԵ. 10-12

Բարի մարդուն իրատը ընդունելի է հարագատներուն համար, իսկ անոնք որ յանդիմանութեան չեն հանդուրժեր՝ վարկաբեկիչ վախճան պիտի ունենան:

Երբ մահն ու կորուստը յայտնի են Տիրոջ, որքան եւս առաւել՝ մարդոց սրտերը:

Անուղղայ մարդը չի սիրեր զինքն յանդիմանողը եւ չի հաղորդակցիր գիտակից մարդուն հետ:

## ԻՆՉ Է ՊԱՅՔԸ

*Մեր ժամանակակից սերունդը պահեցողութիւն ըսելով թերեւս կը հասկնայ մտեղէնէ, կաթնեղէնէ եւ ամէն տեսակի կենդանական արտադրութենէն հրաժարիլ: Ասիկա սակայն պահէի մասին ուշ ժամանակներուն եւ քաղթեցի դասակարգին ըմբռնումն է. սկիզբէն այնպէս չէ եղած: Ըստ Աստուածաշունչի տուեալներուն, պահեցողութիւնը սուգի եւ ցաւի շրջան մըն է, ինքնագրկանք մը՝ կամ ինքզինքին տրուած կամաւոր պատիժ մըն է, որ կ'իրագործուէր որոշ ժամանակ մը ամբողջովին հրաժարելով ուտելէ եւ խմելէ, ինչպէս նաեւ ամէն տեսակ ՀԱՃՈՅՔԷ: Կարելոր է այս վերջին պարագան, այսինքն հրաժարիլ նաեւ հանոյքէ. վասնզի պահէ եւ հանոյք իրարու հակադիր երեւոյթներ են, եւ հետեւաբար կարելի չէ երեւակայել պահեցողութիւն մը, որուն կ'ընկերանայ նաեւ խաղ, ուրախութիւն եւ պար: Ուրեմն կրօնական նպատակով ինքզինքին պարտադրուած որեւէ զրկանք պահեցողութիւն է:*

*Պահէն անբաժան էր ԱՂՕԹՔԸ: Եթէ ուսումնասիրենք սուրբ Գիրքը, պիտի տեսնենք, թէ ուր որ պահէի մասին հրաման կը տրուի, կը յանձնարարուի միաժամանակ աղօթքը: Երբ մարդիկ պահեցողութիւն կ'ընեն, միաժամանակ կը կիրարկեն նաեւ աղօթքը: Պահէր սակայն հետգհետէ աւելի կիրարկելի դարձաւ իբրեւ ապաշխարանքի նշան եւ արտայայտութիւն:*

## ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

### ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

## ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

**Ո՛ր կը կատարէ ձեռնադրութիւնը:**

Ձեռնադրութիւնը կը կատարէ եպիսկոպոսը: Իսկ ձեռնադրութիւնը կը նուիրագործուի օծումով:

Ամփոփ կերպով խօսիլ, թէ ի՞նչպէս կարգադրուած է ձեռնադրութեան արարողութիւնը մեր եկեղեցոյ մէջ:

ա.- Եպիսկոպոսը հրապարակային ֆննութեամբ կը ստուգէ ընծայալին արժանաւորութիւնը, նախորդ թիւնին մէջ յիշեալ հինգ կէտերուն համեմատ:

բ.- Մասնաւոր ֆննութեան կ'ենթարկէ ընծայալին հաւատքին եւ դաւանանքին ուղղափառութիւնը:

գ.- Աղօթքներ, պարտուպատշաճ ընթերցումներ Սուրբ Գիրքէն եւ շարականներ:

դ.- Ձեռնադրութիւն եւ ֆահանայական գգեստաւորում:

ե.- Օծում, որով կը նուիրագործուի ձեռնադրութիւնը, եւ ձեռնադրուածը կը կոչուի Տէր (նոր անուն) Քահանայ:

Քահանայական աստիճանէն վար եւ վեր ուրիշ ի՞նչ աստիճաններ կան մեր Եկեղեցոյ մէջ:

Քահանայութենէն վար վեց աստիճաններ կան, իսկ անկէ վեր՝ երեք:

Վարի վեցը կը կոչուին փոքր աստիճաններ, եւ են.

- ա) Դոնապանութիւն,
- բ) Ընթերցողութիւն,
- գ) Երդմնեցուցչութիւն,
- դ) Ջահընկալութիւն,
- ե) Կիսասարկաւագութիւն,
- զ) Սարկաւագութիւն,

Շարունակելի

## ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

### ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Ամբողջ սրտով գոհութիւն պիտի մատուցանեմ քեզի, Տէ՛ր եւ քու բոլոր սխնչելի գործերդ պիտի թուեմ: Քեզմով պիտի ուրախանամ ու ցնծամ, եւ ներբողեմ քու անունդ, ո՛վ Բարձրեալ: Թշնամիներս նահանջի նամբան բռնեցին, քու դիմացդ տապալեցան ու կորուստի մատնուեցան, որովհետեւ դուն, ո՛վ արդար Դատաւոր, քու գահիդ բազմած՝ իմ դատս եւ իրաւունքս պաշտպանեցիր: Հեթանոսները յանդիմանեցիր, ամբարիշտը կորուստի մատնեցիր, եւ անոնց անունը յաւէտ ջնջեցիր: Թշնամին ընդմիշտ խորտակուեցաւ, անոնց ֆաղափները հիմնայատակ կործանեցիր, եւ անոնց յիշատակն անգամ կորսուեցաւ: Բայց Տէրը կայ ու կը մնայ յաւիտեան: Ան իր աթոռը նստաւ եւ պատրաստ է դատաստանին: Արդարութեամբ պիտի դատէ աշխարհը ուղիղ դատաստան պիտի ընէ ժողովուրդներուն: Տէրը ինք ապաւէն պիտի ըլլայ անիրաւուածին, ապաստան պիտի ըլլայ նեղութեան ժամանակներուն: Անոնք որ քեզ կը ճանչնան, ո՛վ Տէր, քեզի պիտի վստահին, որովհետեւ դուն չես լքեր անոնց որոնք քեզի կը դիմեն:

**ՈՒԽՏ.-** Կտակ, դաշինք, համաձայնութիւն կամ պայմանագիր երկու անձերու կամ աւելի թիւով մարդոց միջեւ կնքուած: Ուխտող երկու կողմերն ալ կը համաձայնին գործադրել որոշ պարտաւորութիւններ՝ բոլորին բարիքին համար: Նոյն հետ իր կնքած ուխտի պարագային, Աստուած խոստացաւ որ այլեւս չընկերակցուի պիտի չկործանէ երկիրը, իսկ Նոյ ու իր ընտանիքը խոստացան հաւատարիմ մնալ Աստուծոյ:

ԵՍՍՅԻ ՄԱՐԳԱՐԵԱԿԻ ԳԻՐՔԷՆ

33.2-22

Ողորմէ՛ մեզի, Տէր, որովհետեւ քեզի՛ յուսացինք. անհաւատներու սե-  
րունդը կորուստի պիտի մատնուի,  
բայց դուն պիտի փրկես մեզ  
նեղութեան ժամանակ:

Ժողովուրդները քու անեղ ձայնէ՛դ  
չչմեցան, հեթանոսները փախան քու  
փախէ՛դ:

Ինչպէս խառնիճն ու մարախը կա-  
նաչութիւն կ'ոչնչացնեն, այնպէս յա-  
փրչտակիչները պիտի թափին անոնց  
աւարին վրայ, եւ անոնք ծաղր ու ծա-  
նակ պիտի ըլլան:

Սուրբ է մեր Տէր Աստուածը որ  
բարձունքներուն մէջ կը բնակի. իրա-  
ւունքով եւ արդարութեամբ պիտի լեց-  
նէ Սիոնը:

Այն ատեն հեթանոսները Օրէնքին  
ձեռքը պիտի մատնուին, իսկ մենք մեր  
գանձերով պիտի փրկուինք. մաստու-  
թիւնը, գիտութիւնը եւ աստուածպաշ-  
տութիւնը պիտի ըլլան այն գանձերը,  
որոնցմով պիտի արդարանանք:

Այն ատեն ձեր կրած երկիւղները ի-  
րենք պիտի կրեն. անոնք՝ որոնցմէ  
դուք կը վախնայիք, իրենք պիտի  
վախնան ձեզմէ. պատգամաւորներ  
պիտի դրկեն ձեզի՛ խաղաղութիւն ու-  
զելով, դառնապէս պիտի լան եւ խա-  
ղաղութիւն խնդրեն, որովհետեւ ա-  
նոնց ճամբաները իրենց աւարտին  
հասան: Այլ պիտի չվախնաք հեթանոս-  
ներէն. անոնց հետ ձեր դաշինքը վերջ  
պիտի գտնէ եւ ա՛յլ գանոնք մարդու  
տեղ պիտի չդնէք:

Աշխարհը կը սգայ, որովհետեւ  
անչքացաւ. Լիբանանը մերկացաւ, Սա-  
րոնի դաշտագետիւնը սօթէն այրեցաւ,  
Գալիլիա եւ Կարմեղոս լերկ մնացին:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿ

ՀՈՈՎՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

12.1--13.10

Ուստի եղբայրնե՛ր, քանի  
Աստուած այնքան ողորմած եղաւ  
մեզի հանդէպ, կ'աղաչեմ որ դուք  
ձեզ Աստուծոյ ընծայէք որպէս  
կենդանի զոհ մը՝ իրեն վերա-  
պահուած, որովհետեւ ատիկա է  
Աստուծոյ ուզած ճշմարիտ պաշ-  
տամունքը: Այս աշխարհի մար-  
դոց վարմունքը մի՛ ընդօրինա-  
կէք, այլ նորոգուած միտքերով  
նոր մարդ եղէ՛ք, որպէսզի ձեր  
փորձառութեամբ ընտրէք լաւը,  
գիտնալով Աստուծոյ կամքը, այ-  
սինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի  
է իրեն եւ կատարեալ:

Ինծի տրուած Աստուծոյ  
շնորհքով հետեւեալ պատուերը  
կու տամ իւրաքանչիւրիդ.՝ մեծա-  
միտ եւ ինքնահաւան մի՛ ըլլաք.  
ընդհակառակը, միշտ համեստ  
եղէ՛ք եւ միայն Աստուծմէ ձեզի  
տրուած հաւատքին չափով գնա-  
հատեցէ՛ք դուք ձեզ: Ինչպէս մեր  
մարմինը բազմաթիւ անդամներ  
ունի, որոնց պաշտօնը նոյնը չէ  
սակայն, այնպէս ալ Քրիստոսի  
միացած ըլլալով՝ մենք բոլորս  
մէկ մարմին ենք: Թէեւ որպէս  
անդամներ իրարու կապուած  
ենք, բայց Աստուծոյ շնորհքը իւ-  
րաքանչիւրիս տարբեր պարգեւ  
մը տուած է, զոր պէտք է գոր-  
ծածենք: Եթէ պատգամախօսու-  
թեան պարգեւը ունինք՝ պէտք է  
պատգամենք մեր հաւատքին հա-  
մեմատ: Եթէ ծառայելու շնորհքը  
տրուած է՝ պէտք է ծառայենք:  
Եթէ ուսուցանելու ձիրքը ունինք՝  
պէտք է ուսուցանենք: Եթէ յորդո-  
րելու կարողութիւնը ունինք՝  
պէտք է յորդորենք. Իր ունեցածը  
ուրիշներուն բաժնողը առատօ-  
րէն թող բաշխէ: Վերակացու  
եղողը եռանդագին թող աշխա-  
տի: Ողորմութիւն ընողը խնդու-  
թեամբ թող ընէ: